

Erasmus Plus կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում ՀՊՄՀ-ն հայտարարում է մրցույթ Ֆինլանդիայի Օուլոյի համալսարանում դասավանդելու համար: Շարժունության տևողությունը 7 օր է: Ֆինանսավորումը կատարվում է ըստ Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի պայմաններին:

Իրավասության չափանիշները՝

- պետք է լինի Օտար լեզուների ֆակուլտետի /դասավանդվող առարկան՝ անգլերեն լեզու/ կամ Սկզբնական կրթության ֆակուլտետի դասախոս
- պետք է տիրապետի անգլերեն լեզվին՝ Լեզուների եվրոպական շրջանակի B2 մակարդակին համապատասխան

Մրցույթի առաջին փուլին մասնակցելու համար դիմողները պետք է մինչև ս.թ. փետրվարի 13-ը Միջազգային համագործակցության բաժին ներկայացնեն **հետևյալ փաստաթղթերը՝**

- Դիմում-հայտ՝ անցնել հետևյալ հղումով՝
- Երաշխավորագիր համապատասխան ֆակուլտետի ղեկանի կամ ամբիոնի վարիչի կողմից
- Ինքնակենսագրություն
- Անգլերեն լեզվով մասնակցության հիմնավորում-նամակ /շարժունության նպատակը, կատարվելիք գործողությունները, սպասվելիք արդյունքները/
- Դասընթացների անվանումները՝ թեմատիկ տրոհումով / յուրաքանչյուր դասախոսից ակնկալվում է առնվազն 7 հատ 45 րոպեանոց դասընթաց /

Մրցույթը հաղթահարած **դասախոսների** վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը ուղարկվում է ընդունող համալսարան: Վերջնական ընտրությունը կատարվելու է ընդունող համալսարանում՝ համաձայն իրենց ուսումնական պլաններում տվյալ առարկայի առկայության կամ տվյալ դասընթացի անհրաժեշտության ու կարևորության:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել միջազգային համագործակցության բաժին:

**Հեռ.՝ 010 59 70 53, ՀՊՄՀ գլխավոր մասնաշենք, 3-րդ հարկ, 301 սենյակ**